



# Հ Ա Ր Դ Ի Շ Ո Մ Ե Ս Բ Ա Վ Պ Գ Ե Ա Ն

Հրատարակի տմեն ամսու մէկին :  
Ասորագրութեան տեղերն են  
Կոմալթա Յ. Միւհէնտիսեան տպարանը .  
Ջմուռան Թանդարան Վանդորական Ընկերութեան :  
Միջազիւղ վերծանութեան Թանդարանը :

Տարեկան գիմն է կոմինիկ .	60 դրամուշ
Վեցամսնայ ՝	55 "
Դաւրա Երթակիք հանդէմներու ձամբու ձախութիւնն վայց է :	առնողին
Մարագրութիւնները առաջին թիւէն կոկոն :	

Դ Մ Ա Ց Ի Մ

Ե. Տ Ա Ր Դ Ի Շ 1862

Թ Ի Ւ 11

## Ե Զ Գ Ե Բ Ի Ե

### ՎԱՐԴԻԿ ԱՊԱԳԱՅՑ ՎԻՃԱԿԸ

Վաղարիկյան է որ մարդոյս կենաց ու-  
ղին անուշահոս ծաղկիներով կը զարդարե  
և ամեն նեղութեանց համբերելով անընկճե-  
լի կը մնայ, յոյսն է որ մարդոյս ապագայ վի-  
ճակը ներկային մէջ գոհացուցիչ կերպիւ կը  
նկարէ, և յուսոյ զօրութիւնն է որ թշուառ  
մահկանացու մի միշտ օր մի երջանիկ ըլլալու  
համար աշխատութեան կատարէ, եթէ վեր-  
նայ յայսը իր հետ կը վերնայ նաև մարդկային  
կեանքը զի մարդոյս կեանքն ու շունչը յու-  
սոյ բաղադրութիւնն մի է, քանի կապրի միշտ  
օր մի երջանիկ ըլլալու կը յուսոյ, և որե իցէ  
գործոյ մի ձեռնամուխ եղած ատեն նորա ըս-  
կը զլան մէջայն չափ յաջողութիւնը փնտուերու  
ապագային մէջ զայն ձեռք բերելու կը յու-  
սոյ, վասն զի յայսը ապագային մէջ բարիք  
մի վայելելու ակնկալութիւնն է :

Վարդը այս սկզբունքն և բաւականասի-  
րութիւնը որ գոհութեան առաջնորդն է ,  
հիմ դրած է իրեն այն օրուընէ երբ առաջին  
անդամ երեան ելաւ ապագային մարմանդին

մէջ ու բուրիլ սկսաւ, իր երջանկութիւնը  
ապագային մէջ գանելու կաղասէ, ներկային  
մէջ բաւականութիւնը և գոհութիւնը ձեռ-  
քէ չ'թողավու, գիտելով, զի մէկը քիչէն գոհ  
ըլլալով պիտի կարենայ շատէն ալ գոհ ըլլալ,  
վկայական միայն ջուր սպասեցիր սիրելի Վագին  
որշափի բաւական կը լլալ շարունակ զնիքը ան-  
թառամ պահելու տատուծով իր մերեւ չելաւ  
իր յայսը, ընդ որո այսօր արժան կը համարի  
իր ապագայ վիճակը յայտնելէն յառաջ նախ  
իր խորին շնորհակալութիւնը ցուցնել իր  
Վագայ բաժանորդաց որբ Վագասիրաբարյար-  
գելով զնիքը թառամելու չ'թողուցին :

Վարդը գոհն է իր անցեալ ու ներկայ վի-  
ճակին վերայ, և յուսալից է նաև գոհ ըլ-  
լալ ապագային մէջ ալ: Աւրախ է Վարդը որ  
իր սիրելի Վագին մարմանդին մէջ բունելու  
և բուրելու պատիւը ունեցաւ, չդանգա-  
տիր իր փուշէն ալ զար բնութիւնը իրբ վէնք  
պարգևած է իրեն զնիքը յարձակմանց դէմ  
պաշտպանելու համար, և չ'թողուլ թշնամի  
ձեռքեր իր կենացը միասնել . . . :

Վարդը յայն բաւականասիրութիւնը և  
քիչն գոհ ըլլալ իրեն հիմ դրած է ըսինք,  
այս հիման վերայ պիտի մնայ գարձեալ,  
իր սիրելի Վագին անձնուիրաբար ձառայել

իրեն մեծ պատիւ ու վարձք սեպած է, և իր այս ճառայութենեն շահ ըսպասէր երբեք, ինչպէս վնասին ալ ազք առած չէ:

Պարզ ու համառօս խօսքով բացարձենք դիտաւորութիւննիս, Վարդը նորէն ազգային մարմանդին մէջ բողոքնելու և բուրելու նպատակ ունի, յունիսին իր ասպեկտն շար ջանը աւարտելով յուլիս 1 ին վերստին տասն ու հինգ օր անգամ մի հետ զհետէ կօկոներ բանալու կը պատրաստուի այժմէն, դարձեալ մի և նյսն գիրքով և նպատակու, այսինք ա ազգային յօդուածներով, սրատշարժ ող բերգութիւններով, կատակերգութեամբք թարգմանութեամբք ընտիր ստանաւոր գըր ուածովք, վիպատանութեամբք, բարսյական խրատուք, զուարժալի առակը, և երբեմն բանադատութեամբք, և այս վերընիք ադդատուաց սրաց բարձրը իր սրածայր փուշերով խայելու համար պիտի գործածէ երբեմն: Վասպարա կայ եմք զի Վարդին, անուշահոստութիւնը սիրով ներովամիտ պիտի բլայ, քաջ գիտելով զի փուշունի նա եւ չանարդեր զոյն իր փուշին համար օր իր միակ զէնքն է: Վ.րդ՝ Վարդը իր այս անձնանուիրական պաշտօնը աւ նընդհատ շրուանակելու համար, զենքը յարգութ ամիսներու վասահանով իրեն օդնու թիւն մի կը իներթէ, այսինքն վերատին նյսն ազդդամբութեամբք նյսն պաշտօնին մէջ մնալ իր արմասը ոռողանելու, և նոյց փոքր ինչ առաւելութիւն: Վարդին փափաքը իր բաժանորդաց թիւը կրինապատիւն ին է, այսինքն 200 սոխակիներ առնենալ իր թերթերուն միշրայ է և կարծեմք խիստ չափաւոր է այս փափաքը, վասն զի շատ գիւրին կը գանուի արթի սողիին յառաջադիմութեան ի որը աէ փափաքը անձնը, բայց դժուարութիւնը դանիներուն միշրայ է: Վարդը իր բաժանորդաց առաջարկութեամբք միայն, որպէս զի փախանակ զինքը առաջարկներէն աւելի ջուր խնդրելու, նոյց թիւը շատնաց ու ամենքը առ առնից գանձրութեան մէկ մէկ պատաժուր տարի զինքը անթառամ պահեն միշր, այսինքն փախանակ բաժանորդաց թեամբ, գինը առ ելքնելու, զար չուղեր ընել գիսանալով ժամանակին նեղութիւնը ու ամսան առաջուն ջնուազութիւնը, քիչ մի ալ թե թեւցնէ: Ա վասիւեթէ մինչեւ յուլիս 1 ին միշր 200 թիւ բաժանորդ գտնայ հետագայ պայմանաւ պիտի հրատարակուի, վեց ամսեաց շրանով ամեն 1 ին և 15 ին: Բայց ամսարդութեան պիտի փոխանակ 60 զուրուշ 50

զուրուշ խիկ վարժապետաց դպրոցի աշակերտաց կղերին դատուց մասնաւոր ընկերութեանց և կանանց 30 զուրուշ: Վհտ հիմնելունէ Վարդը իր գիտաւորութիւնը յայտնելով յաջողելու մեծ յուսպէ Բ շնչանին կ'սպասէ և եթէ սիրելի Վդժայինք զինքը ըստարափուսն իր օր և իցէ սրոշման մէջ անմեղպրելի կրնայ համարուել: . . . :

### ԹԱՏՐՈՆ ԵՒ ԴԵՐԱՍԱՆ

Վցգիս մէջ թատրոնի օդտակարութիւնը ձանցուելէն անմիջապէս ենքը սկսան այլ և այլ գրիչը այլ և այլ ձեւերով նորա կարեւորութեամբն և օգտին վերաց խօսիլու գրել ունանիք նորա հատակառութեան վերաց խորհեցան և կը խորհին օրոնց վանիարը օր ըստ օրէ կը պատկի բաղզումք նորա հաստատութիւնը աւելանելով ուրախացած ի սրանէ, բարեմատվութիւնը եւ զան յարատեւութեանը, ստիգմատը նորա արգելու և օդտակարութիւնը տեսնելու կամ կայը վնելով, խիկ այսու ամենայնին անտարբեր չկրնալով մնալ տարբեր բերան ներ բանեցուցին ու երդիծաբանելով ծաղքեցած ադրբեյ ցին շնչանին է ամենեցուն զի Յատրոնն է յաւածադիմութեան նպաստող շարժառարարիթիւնը ու միջոցներէն մէկը, որոց մէջ իբր ՚ի հայելով յայտնի կ'նշմարուին մարդկային պատկանութիւնը և դործուած կամ գործելի ոճիրներուն գեցութիւնը: Բայց մէք ՚ի բաց թողլով սորա վերաց երկարորդէն համել, զառնամք մեր բուն նորանուն կին, վասն զի արդէն բաւական խօսած եմք (աեղ թիւ 2) և թէ հարկ ըլլայ աւելի յարմար առեն խօսելու կը խօսանամք:

Թատրոնի մի առաջնին պէտքն ու զարդը դերասանն է և զայս ոչ ոք կրնայ ուրախան, նաև անուրանալի է դերասաննութեան արհետանին կարի գժուարութիւնը: Հաս պէտք է դիմելի գերասանութեան երկու գլխաւոր կեանելը, բնական և ստացական յատկութիւնը, զայս պարտաւոր է դերասան մի ունենալ ՚ի միայնին, ստացական յատկութիւններէն առաջնին է, բաւական ուսումնականութիւն, որով կարենայ դերասանը թատերութիւն ճանշանալ և խօսածին իշմանը հասկնալով ձեւուորիլ: Եթէ կրորդ արտասանութեան մաքրութիւն ու փոքր ինչ շարժմանց ձեւեր և այն: Խիկ բնական յայտի թիւնն է, նախ զդացմանք, կրից բնական ձեւ, շարժմանք, և շարժմանը ձայն:

ոգք բնաւթեան պատուեներն են։ Բայց այս  
բնական յասկարակութեանց առաջինն է, ինչպէս  
ըսմիք զեացմաւնք, զի եթէ գերասանին սիր-  
ող չզբայ, ու կիրար չշարժի, իւր ձևացու-  
ցած մասին զօրութենէն, չկրնար հետեա-  
բար ունինդրաց սիրու պատճառել նոյն աղ-  
գեցութիւնը (enthousiasme)։ Ուստի այս  
երկու գլխաւոր յատկութիւնք մէկէն (բնա-  
կան և սուացական) դեռ մեր ազգին մէջ  
ունեցաներ գրեթէ չըլլալով, թատրոնի վի-  
ճակի ալ գոհացաւցիչ չկրնար ըլլալ և ունե-  
ցած թերութիւններն ալ ներելի են միշտ,  
զի ապարացին պայծառ յօրը նոյն թերու-  
թիւնները կատարել կը խօստանայ։ Ոէկ  
խօսքով ազգին մէջ գեռ գերասանու թիւնը  
երախայ է, ուրեմն նուրբ քննադատութենէ  
յազար պէտք է ըլլալ, զի նուրբ քննադա-  
տութիւնը փոխանակ քաջալերելու համբակ  
մի և պակասութիւնները ուզուելու, վշա-  
աեցունելու առիթ կը լլայ, նաև մանաւանդ  
անուամբ հրապարակաւ քննադատութիւն  
ընել (critique) բայց ասով ալ ըսկէ չնէմք ու-  
զեր որ քննադատութիւնը անդեռ և անօ-  
գուտ է։ Երբէք, այդ կարծիքը չունիմք,  
այլ ըստ մէկ պէտք է աւելի յօրիգինաց և  
քաջալերութեան ձևակ մէզմ քննադատու-  
թիւն ընել, զօրօրինակ փոխանակ ըսկէ լու։ Ա-  
րեններ ականները դաց կարտասանէ, աւելի  
օրինաւոր և աւելի վայելու չըլլալ ըսկէ թէ  
գերասան մի պէտք է խօսքը չծամմէլ այլ  
յատակ արտասանութեամբ խօսիլ։

Ուստի առանց երկարենք խօսքերնիւ,  
համզութիւք որ ամէն նոր բան իւր պակա-  
սութիւնը ունի. և առանց սիրու վայսացնե-  
լու օրինաւոր և աննախանձ քննադատու-  
թիւններ ընեմք (եթէ ունիմք քննադատ ըլ-  
լալու կարտասութիւնը) և ամեն մէզի ախոր-  
ժելի չեկածք հրապարակաւ չպախարակեմք  
մի չկայ ներդաշնակութիւն մի որ ամէն ա-  
կանջաց ախորմէլի երենայ։

Դումքաքուեն դուրս Ա. Պօղոսեան և  
Ա. Արվաւեան վարժարանաց տարեկան  
հարցարնութեանց պարբեարաշխութեան  
օր կարդացուութեանը։

Ենթասերձ Ա. Հայր և ապգաւեր  
Ակումբ։

Ամեն իրձութիւնը, զըր մարդիկ ի գործ  
կը դնեն, ունին վախճան մը, յօր մը, ակըն-

կալութիւն մը, մշակը տմաւն տօմթը, ձըմ-  
ռան ցուրտը, աշնան քամին, սիրուլ կը տա-  
նի երկրին պատուական պատուզը վայելելու,  
այն առարկան որ բարի վախճան մը կը ցու-  
ցընէ միշտ գեղեցիկ և սիրելի է, փոյթ,  
ձիգ, և աքնաւթիւն, անոր համար բանմի  
չեն երենար մարդուս, թէ և առաջնից  
գործը գժուաբին ալ երենայ, ասանկ գրե-  
թէ ընդհանրապէս մարդիկ ազգայի մը  
յօսով իրենց կենացը մէջ միշտ ներկաւնին  
կը զօհեն, մեծատուն մը պըստի որ հարրա-  
տութեան աղբեւրները առատացնէ, այսու-  
անենայնիւ անշարժ չկենար գործելէ, ասի-  
կայ առահսութիւն կիրանիր ըսել, ոչ քանի  
որ կեանք ունի պէտք է աշխատի, թէ իր  
և թէ իր ընաւանեացը ներկայ և ապաշայ  
բարելաւութեանը համար, աւաղելի է այն  
մարդը որ կեանքը ծուլութեան կը զօհէ և  
աշխարհի մէջ ների. չոր արարած մը, անպէ-  
սուզած մը, խոպան երկիր մը, կուգայ  
ու կերիմայ վնաս իւր անձին, ասանմիկրէն  
օգուտ ամեննեին, բայց առաջնուն թէ ոչ  
խարին թէ մարդկութեան և թէ պէտքու-  
թեան շատ օգուտներ եղած է։

Այս այսպէտ աղբիւ Տեարք, մեհավայ-  
րիս մէջ նորուած մանկանց հաւագումը իւ-  
րեն ու օման եենաց աշխատութեան պահա-  
մի փառքանի է, որ այսօր կը ներկայանայ  
Ձեզ Վազին յօրը պատկեցու, և ի նշ ուրա-  
խութիւն է մէջ մշակող ակբուն և անձան-  
չիր պարտիզանաց, որմէք իրենց սնկած և  
ուզած ազգի ազգի ծաղկանց անուշուա-  
րութիւննքը Ագին կը ներկայացնեն, թող-  
ցնծ ուրեմն Վարչատ, և փարաւէ իր  
հարիզոնէն արտմութեան ամսկէրը, որոնցմով  
երբեմն կը հեծէր, քանզի իւր գաշտերը Վա-  
գաւեր Տեարցս եւանդաւուն ջամփուլ հերկուե-  
լով կանանցացած են ուսման և գիտու-  
թեան գեղեցիկ պահերով զարգարուած, ու-  
րանք հայրենեաց տիտուր սրաից բերիրու-  
թիւն կը պատճառեն։ Վասոր յիրաւի նոր օր  
ածնելի ժոմանակ, և պաշտելի տարելարձմի  
է Ա. Պօղոսեան և Ա. Վ. Վարվառեան գպրո-  
ցաց ուսման աշխարհերտերցուտարւոյն 365 օ-  
րերուն մէջ, այսօրութիւնէ երեւելի օր մը չկայ  
մէզի համար, պամթեաւ մեր տարեւոր աշխա-  
տութեանց պատկինց է, այսօրուան կ'սպա-  
սէ բոլոր տարին մէջ համար, որովհետեւ  
աշխատութեանց պատկինը համ հրապարակա-  
կը յօսունուի, և աշխատասիրութեանց գեղե-  
ցիկ առարկնութիւնը գրկախառն համբու-  
րովին դէմքերը գեղեցիկ մահաներով կը ցը-

ըս, հոս կառնուր հանդիսատ աշխատասեր աշխատատը: Երջանիկ է այսօր և ասկէց երքը աշխատառթեան քաղցր պտուղը վայելողը, շատ գմբաղդ պիտի ըլլայ այն աշակերտը՝ որ այս զգացմունքէն ինքզինքը հեռացուցած է որն որ իմ սիրելի ընկերացս մէջ բարեբաղդաբար շատ քիչ կը գտնաւի, իմ սիրելի ընկերներս աղէկ համոզուած են որ՝ ուսմանց արդեամբը պիտի երջանկանան իրենց երկու կենացը մէջն ալ, անոր համար իրեւ յաղթական զինուորներ իրենց վարձին յուամիլ հոս կը խմբուին իւրաքանչիւրը աստիճանին համեմատ պսակուելու:

Վզնիւ ընկերակիցք, հիմա ձեր կուրծքերուն վրոյ աշխատութեան բեղմնաւոր պտուղը յաղթութեան մրցանակ պիտի պահնայ, զոր կը ձօնեն մեզ մեր ազգասէր տեսուչները. ուրեմն յիբաւի, այսօր եկէք տարեգլուխնիս երգօք և օրհնութեամբ պատկենք, մեր աղնիւ պաշտպանները մեզի կրկին և կրկին պարտուց տակ կը թողուն մեզ. մենք ալ մեր ստարտերը նուիրական սրտով կատարենք, ջանանք միշտ այսուհետեւ ծուլութեան ամպերը մեր մասց հորիզոնէն փառատելու, թէ բարոյական մասին, և թէ ուստումնական. այս երկու սուլբ պարագերովով միշտն պիտի կրնանք անոնց և ազգիս յոյսը պասկել, այս երկու գեղեցիկ ձիբերալը յառաջդիմութեան ասպարեզը կրնանք մտնել, ասոնցմով հաճելի պիտի ըլլանք Վստուծոյ, և մարդկան. տպաւորենք մեր սրտին մէջ Վստուծոյ երկեղը որ սկիզբն է իմաստութեան. Հայաստանեայց սուրբ Վկեղեցւոյ ջերմեռանդ պաշտպաններ ըլլանք, գրոշմենք մեր սրտերուն վրայ ապրիլ և մեռնիլ հայրենեաց համար. վերջապէս միուլ բանիւ ըլլանք արդիւնաւոր ՚ի վարս ՚ի կրօնս և յուամունս ՚ի պարձանս Վզիս և ՚ի փառս Հայրենեաց:\*

25 Խարբ 1862

Աբրահամ Այսկանան  
արտի աշխիրը  
Ա. Պոլստան Ա. արժարանի:

### Ա Լ Ի Մ Է Ք

Ըստական թիւն և վեց:

Բոլոր գիշերն այս մտածմանց մէջ ընկըզմ

\* Այս ճառը թէւ ամփէ մի առելի է մեզ իրկուածէ, բայց հիմայ գտանք յարմար առիմ հրատարակելու:

եալ, արշալուայ բացուելուն անմիջապէս ելաւ և ողջամիտ ծերունուայն քովի երթալով, աղաջեց նորա որ այնուհետեւ զինքը կենակից ընկունի իրեն, որ նովու սկսի վայելել այն երջանկութիւնը զոր մինչեւ այն առեն փրնառեր և չեր կրցեր բնաւ ձեռք բերել: Օերունին այս խօսքին վերայ ախորժ ժրակտով մի շնորհաւ եմ ըստ, որ մեր գեղջիային և անմեղ կեանքը առելի երջանիկ կրուենայ քեզի այսօր, որ գուցէ երեկ այնպէս չեիր համարէր: Վայ այսու ամենանայնիւ այս կեանքը դու չես կրնար վարել այժմ, և երջանկութիւն չէ թէ միշտն դաշտերու մէջ կը բնակի այլ եթէ ուղես բաղմամբով քարացաց և հարսութեան մէջ ևս կրնաս գլունել զայն, բաւական է որ սիրտ միշտ հանդարտ պահէլ ջանաս, ու գոհ ըլլաս ունեցածիդ վերայ. նա և սանձես առելորդ բաղանք, որք անցագուրդ են ՚ի բնէ և անգործութենէ զգուշանալով, ու սրարկեցուութեամբ գործի մի զբաղացած կարմանաս նմա, որ և է ասկէ աւելի բան չպահանջներ երջանկութիւնը:

Վզէկ գիտեմ, պատախանեց Վլիմէր, թէ այդ խրատներովդ կրնամ երջանիկ ըլլալ, բայց խիստ պիտի նեղուիմ եթէ երջանիկ լինելու համար ես ինքնին կեանք մի վնասուեմ զոր արգէն պատրաստ ձեր քովը կը գտնեմ զայն, մանաւանդ գեղջկային կեանքը նորոգ բան մի չէ ինձի համար, որում չկարենամ ես դիւրաւ յարմարիլ—հոս մի առ մի սկսաւ պատմել ծերունուայն իւր որպիտի վիճակի մէջ ծնած ըլլալ, հոն քարայրին մէջ այն չարաշուք քսակին ու մատանին ինչպէս գտնելը և ինչ անցքեր գլուն անցնելը: Յետոյ քսակին ու մատանին բարի ծերունուայն տալով “քեղ կը ինձայեմ զանոնք ըստ, և կը ինդրեմ որ հաճիս այսուհետեւ չըամել զիս քովէդ”:

Ուշիմ ծերունին զանոնք ըսելով, պատահանեց, շատ լաւ. որովհետեւ այսպէս կուզեն, կը ընդունիմ նուերդ, բայց չգործած ելունապատակաւ, Վստուած պահէ զիս որ այն պիտի բան մի մօքէս չ'անցեմ, մի միայն կը պահէմ զանոնք, որ եթէ օր մի այս մեր գեղջկային ու անմեղ կեանքէն ձանձրութիւն մի իմանաս, վերատին քեղդաբնեմ, զի որքան խոհական և հաստատ ըլլայ գիտաւորութիւնդ, այսու ամենայնիւ քիչ մի շուտ և առանց քննութիւն եղած կ'երեւնայ ինձ, և գուցէ յետոյ ըրածիդ վերայ զղաս ուստի ուղածիդ չափ վարէ մեր կենցաղը ու մոփորձը, եթէ հաճիս քո ձեռքն է հոս մնալը

և եթէ տապտուկի իմանաս, ևս չեմ ուղեր որ քեզի արգելը ըլլամ, կրնաս ընծաներդ առնուլ ու երթալ: Ա երջին ասովիճան ու բախցաւ Վլիմէք ծերունւյն սիրամիր ընդունելութեանն ու հանձարեղ որոշմանը վերսց, ու փուձ մասամունքներն անմիջապէս մաքէն հեռացնելով որք մինչև այն աւտեն բիւր նեղութիւնը և վիշտք պատճառած էին իրեն: Վյն խաղաղ ու սակաւապէտ կենաց և գեղջկային զբաղմանց մէջ ըսկըսու վայելել այն ամբիջ ուրախութիւնն ու այն կատարեալ հաճութիւնը որ յառաջ անծանօթ էին իրմէ: Իտական ժամանականց նելէն յետոյ, փոխանակ զջալու առաւել ևս հաճութիւն կ'զգար անկէ, միտքը գրաւ իւր երջանկութիւնը կատարելապէս պսակել ու այնպէս ամուր հաստատել որ յաւիտեան ձեռքէն չ'թուք: Բարի ծերունին աղջիկ մի ունէր, որց վերայ գեղջկութիւն ու վարուց մաքրութիւնը ակներե և պայծառ կը փայլին փափոխակի որք իրարու հետ մի ացած աւելի սիրուն ու չընալ կ'երեցնէին զմաքը: Ուստի Վլիմէք իւր որոշումը հաստատ պահելուն վերայ բաւական փորձեր ցոյց տալով, կ'վասահէր որ ծերունին ևս անկասկած կմնայ տալ իւր գուստը իրեն ՚ի կնութիւն, մեծաւ թափանձանօք յայտնեց նմա իւր բաղձանքը, բայց ծերունին բաղմաժամանակեայ փորձառութեամբ մարդկանց փոփոխամտութեանը վերայ լաւ տեղեակ լինելով ու գեռ տարակյոս ունենալով Վլիմէքի ակնողդողդութեանը վերայ ուղեց որ այն քիչ մի ատեն ևս նոր կենաց ընթացքը շարունակէ: Վերջապէս այնպիսի ճիշդ ապացոյցեր տեսաւ նորա վերայ ու հաստատ իւմացաւ նորոտ վիճակէն կատարելապէս նորա գոհ ըլլամն ու անկէ հեռանալու երբէք միտք չունենալը ալ առանց երկարելու նորա բաղձանքը կատարեց: Եւ Վլիմէք վերջապէս հասաւ այն երջանկութեան, որում չ'ին կրցիկ հացնել անտպառ հարստութիւնք տեսակ տեսակ վայելը և պատիւք: Ուզեց նա և որ քսակն ու մատանին զատ զատ հողին մէջ թաղութին, որպէս զի ուրիշ մը գրտնելով իրեն նման թշուառութեան ձեռք ընմատնուի երջանկութիւն փնտուելով այնպիսի տեղուանք ուր որ գմուարին է գտնել զայն:

### Հ Ի Մ Ք ԱԿ Ո Չ Ի Ն Ա Զ Ը

Վիման անունով անձ մի առենօք Տիգրա-

նովիերտի կողմերը փիլսն ու վեղար հագած իրը վանքի մի նուիրակ կը պտըտէր հետու մատած մի առած, որ էր փայտատ մի (խաղմա) շատ մի գեղջկայի շուշփաներու մէջ պլած: որոյ անունն ալ հիմ տակովն \* մատունք դրած էր, ու հետաքրքիր անձանց որք կը փափաքէին անգամ մի անունալ զայն, կըսէր “անհնար է սուրբ մասունքիս բացուիլը վասն զի մեզի պէս մեղաւորի գործ չէ համարձակիլ ձեռք դպցնել նորա: Թող թէ ամեն օր երազու կու գոյ ու կը պատուիրէ խոտիւ ամենեւ ինչ չի բացուիլ, և բացուելու համար ստիպովն ող իր արժանաւոր պատիմը կընդունի ո: այս նենդաւոր հնարքով բաւական ժամանակ ու միկ ժողովուրդը խարելէ ու կողապտելէ յետոյ, օր մի կիջէւանի կոյր ու այրի կնոջ մի տուն, և նորա իր կրաքարդ մասունքին վրայօք շատ մի սքանչելիքներ պատմելով, կըսէ, “եթէ մինչեւ առաւօտ մեծաւ ջերմեռանդութեամբ անդադար լոյ ու աղօթէ: մասունքին փայ անտարակյոս կը բացուի իւր աչքերը:

Խեղճ կինը հաւատալով նորա պատմած ներուն մինչեւ կէս գիշեր առանձին սենելի մի մէջ նասած մասունքին վերայ անդադար լալով աղօթմէլ յետոյ հետաքրքրութիւն մի կունենայ մէկ մի բանալ զայն: գուցէ այնունորա հրաշքը երեւան ելնէ ու իր աչքերը բժշկէ: Ոտնալով այն պատուերը որով պատուիրութիւն էր իրեն ամենեւ ամենեւին չշշափել անդամ, կը բանայ մէծ գմուարութեամբ, առանց նորա ինչ ըլլալը գիտնալու ստէոյ ոչչ ու ընելը քսելով զրաւոր երկաթը բժշկութիւն կը խնդրէ թափանձանօք:

Հիմքակաղին զօրութիւնը կոկսի երեւան ենել, կինը մինչ այսպէս անդադար կուլար, թմրութիւն ու մրափ մի կը գոցեն նորա տչուըները, առառ կրլայ, գեռ արեգակը չի ծագած, ու ամենքը խոր քնոյ մի գիրկը ինկած, մասունքին տէրն ալ իր առանձին սենեակ փայտատին հրաշքներ երազոն առեն յիշեալ կնոջ քան տարեկան աշխատանքը որպան արթնալով մօրը սենեակը կերթայ, երբ յանկարծ կտենոնէ գեղջկայի փայտատ մի մօրը տոշեւ, առանց հետաքրքիր ըլլալու շուտով մի կունու զայն ու կոթ մի ալ գնելով վրան կերթայ սցգին աշխատելու:

Վիչ մի ետքը կարթնայ նաև Վիման, կը հագուի շուտով և փարատեա՛ զցաւո: . . . . ըսելով կնոջ սենեակը կը մանէ, բայց ինչ կը

\* Երբ թէ շատ դարգեւ շնորովն հիմը կը քակէ:

տեսնէ, խեղճ կինը շատ մի աղօթելով ծնկան վերայ կրթնած քնացած, շուշփաները չըրս կողը տարածուած, մասունքը յերկինն (կարդա այդին) համբարցած, կշփմթի, և բարձր աղազակներով կարթնյան զինն, և մասունքը կհարցնէ, կինը հաւ հոս է կըսէ, ու կախի չըրս կողմը խարիստիել . . . .

— Ենօրէն ինչպէս համարձակեցար բանալ զայն ու պատուերս ոսքի տակ առնել. ուր է մասունքս, ինչ եղաւ: Ահ ծառայ եմ նորս զօրութեանը գուցէ երկինք համբարձած է. կըսէ կինը. ընդ այս նորդական աւելի կը բարձրացնէ իր աղազակը, ինչուան բոլոր դրացիները ու նաև գիւղին արթուն վերակացուն հոն կը վաղեն, իրաւունք գատառան վնառածած ատեննին յիշեալ երիտասարդ տղան իմանալով, բայց առանց բանին ինչ ըլլալը գիտնալու փայտատը ուսին վերսց դըրած մէջերնին կը վաղէ, մեր արգայ նուիրակը երբ կը տեսնէ զի հիմքակողին. ուուրբ ազը այն օր կոթ մի առ աւելցնելով իր հրաշքին և զօրութեանը վերայ, գետին փորելու ծառայած է, խելոյն ալայլած կը յափակէ դայն, այս է մասունքս կը սուուայ, ոհ անկանիմ առաջին բուք պատաւակին մէջ խոթեց: Գեղին վերակացուն որ բաւական լուսաւորեալ գուցափար մի ուներ, շաւա մի իմանալով նենգ խարդախութիւնը հրասպարակաւ խոստավանելու պարտաւորեցնելով սուտ նուիրակը, փայտատը և ժողուած ինչքը ձեռքէն առնելով հրաշափառ խայտառակութեամբ. կը վրանուէ գիւղին: Այս դէպքը եթէ իրօք եղած չէ առ բայց և այնպէս յայտնի ապացոյց մի կրնայ համարուիլ, զի որ և իցէ անձի մը այս ինչ սրբոց մասունք ունիմ բուլով, չը թողուն ժողովուրդը կողոպտել ինչ ուան օրինաւոր վկայագիր մի չունենան: Եւ ով գիտէ քանի՞ այսպիսի անձանց սուտ հրաշագործութեանց և մասանց հաւտալով չարացար խարուած եմք և կը խարուինք:

### ԱԺԱՆ ՀԱՐՍ ԱՌԱՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Եւետիս այն երիտասարդաց որք անկարազ էն իրենց ընակից մի գտնալ գիւրին եղանակաւ. զի ահա գանուեցաւ այնպիսի միջոց մի որով նաև մեծ օգուտ մի պիտի գտնեն իրենց վիճակը բարելաւցնելու: իսկ իսկ կարենք, Օմիւռնից ծոցը կը սնանի այն հար-

որ որ դիւրին եղանակաւ կատացուի, ու բնիկ Օմիւռնացի է, մէկ հատիկ՝ թէ իր սեռին մէջ ու թէ միւսաներու համար, զի միշտ հարս է ոս և յաւիտեան չի պառուր նար, (ծննդենէն մինչև ցարդ հարս է, արդեօք երբ աղջիկ է եղեր, որ կըսէ թէ կըս աղջիկ մի եմ, կարծեմ իրօք աղջիկ է դարձեալ, միայն անունը հարս զրուած է նորելուկ կնքահայրէ մի), շատ ճարաւար արհետուներ ունի, ինչպէս են պօյածիութիւն լուսնի լուսնի և քաջահմուտ ֆիօլուֆի մէջ, չմոնամէլ յիշել զի նաև է Օմիւռնից մէկ հատիկ ծլեմնդաբանն, ամուսնաբանն և մեռելաբանն, պարկեշտ, առաքինաբարաց, անկառատուելու (կուղեմնէ մէկ մի թէկին դպչիր) և վերապէս չընալ չնաշխարհիկ յաւերծահարս մի է առանց հարսանեաց հանդէսներու կամ ծախքերու կատացուի, միայն թէ առնու ուզող անձը քանի մի տարի ուրիշ օրացոյց առնելու գինը նորա համար զնէ, որով թէ յիշեալ ամեն ծիրքերով լի յաւերծահարս և թէ մշտնջնաւոր օրացոյց (\*) մի կրնայ ձեռք ձլուել, այսու նաև և մեծ շահ կինէ տանողը, նախ զի նորա արհետուները սորմելով կրնար թէ զինքը և թէ իր նոր հարսը հոգալ, և երկրորդ, յիշեալ մշտնջնաւոր օրացոյցով վայլու աշխարհը և յիս մահան երկու ալ ժառանդ թողուլ իրեն. թօսանց: Քաջայցո նոր զի այս օդտակար կերպով շատ անձինք մեծ վաստակ պիտի ընեն, թէ և յ. Երեմիային օրացոյցները կիսով չափ միայն պիտի ծախութն ասկէ ետքը:

### ԱՌ ԱՌ

### ԿԱՏՈՒ ԵԽ ՄԿԱՆԵՐ

Ա.

Դարպիկ որսորդ կառու մի կար

Որ անդադար

Մկանց սեռնին ջարդ կուտար

Կը կծկակէր

Գրուի կը ծռէր,

Մկանց ծակին դէմ կը նատէր,

Թէ անձնց մէկը յանդպնէր

Գլուխը ծակէն դուքս հանէր,

Մէր ճարպիկ կատուն

(\*) Այս նորելակ օրացոյցին գործածութէւնը եթէ բարձար անհիմ գանձնութ լուսնից արված լուսնի շնորհ զատական իրենց սորմելուն:

Շուշ շուտ կը բռնէր :

Բ.

Ոկներն ամեն  
Փողակիքի են  
Խորհուրդ կընեն  
Կատուին ընդ դէմ :

Այս խորհրդին ատենաբան  
Այսակո բացաւ իրեն բերան  
”Այս կատուէն թէ որ կուզէք  
”Մէր ընասնիքը աղատենիք մենք  
Գէտք է շուտ մի  
Ճարպիկ մուկ մի  
Դրան կանակ  
Ընենք սրահնակ  
”Քանի որ չար կատուին աշուտին  
Մէր լիայ հային ,  
Եւ մէք ամենքս  
Երգում ընենք  
Ճակէն չելնեք ” :

Գ.

Պորտաբայջ կատուն  
Վէր թամիկներուն  
Կոթնէր կ'սպասէր  
Խւր որսիկներուն  
Օր մի սպասէց  
Մէկ հաս մ'ալ չքանեց  
Օր մնալ համբերեց  
Բայց շատ զարմացաւ  
Երբ որս մի չուտաւ :  
Վնաց նստաւ :

Փիլսարացից գրքեր ձեռք առաւ  
Քըքրեց քըքրեց  
Կոյց մէջէն իր խելք մի սորվեցաւ  
Փիլսելք առաւ :  
Վեզուրը հագաւ  
Երկայն երկայն ալ  
Մորուք թուլ տուաւ ,  
Խակոյն ճեղար  
Վարդափետ մ'եղաւ ,  
Սաղմոս ձեռք բռնած  
Անկիւն մի քաշուած  
Սուխիւն կարդաց :

Դ.

Ոկներ երբ աեսան  
Թէ կատան գացեր  
Ս Անտանի կարգն է մատեր

Շատ մեծ զարմացան

Այս հրաշքին վրան :  
Հեղ ձայն մ'արձակեց  
Միները կանչեց  
Թողութիւն խնդրեց ,  
Վասն զի , ըստ  
Եղայ կրօնաւոր  
Քամսունք կ'պահեմ կոր ,  
Թէ որ դուք ալ կը սխալիք  
Մեղքը մի կը գործէք  
Եկէք ինձի խոստովանէք :

Ե.

Այն անխելք մկներ  
Շուտ մի հաւտացին  
Կատուին խօսքին  
Եղան նորա կեր :

Զ.

Այն մարդն յիմար է  
Որ կը կարծէ թէ  
Վեզորն ու փիլսն  
Անձին բարք կ'փրիսէ :

Արակեն մարդաբեան

Անեցի .

ԱՆՔՍԱՆԴՐԵ ՈՒՂՋԸ

Կը պատմաւի թէ Աղեքսանդր Վակեղունացին ուղար մի ունէր որոյ կրնկէն միշտ պատերազմի թմբուկը չէր-պակսէր , նաև հանդէսներու մէջ ալ վրան դրած կը չալէին : Ուստի երբ շատ տարիներէ ետքը ուղար ծերանալով անկարող եղաւ բեռ , տանելու , Աղեքսանդր աղատ . հրամացեց զայն , ութող տուաւ շուկային մէջ ճիտէն թուղթի մի կախած , որոյ մէջ պատուիրած էր խամիւն ոչ մէկը դէմ գնելու համարձակիլ , եւ թէ վեստ մի տալու ըլլաց :

Ուղար առանց մէկու մի վիասելու ուղակի նողարավաճառի (պարտ) մի խանութը կը մանէ , զոր գեռ նոր բացած էր ուգրեթէ իր ունեցածը միայն այն վաճառքն էին , կախի անցագաբար ճաշակիւնորա ուղացածները :

Խեղճ նպարավաճառը թէ և կուզէր դէմ կենալ ու արգիլել , բայց աւանալով ճիտէն

կախուած թնւղթը , գողարով մէկ անկիւն քաշուած կակի ինքնիրեն հաջալ , փոնդտալ , ծափ զարնել , ու երբեմն անօթներ իրարու վերսոյ զարնելով շնկոց հանել , որպէս զի վախցնէ զուզոր ու հեռացնէ : Իսկ նա հանդարտ ու անխոսով նպարբներ ճաշակելու ետևէ եր , քովի խանութմանը տեսնալով այս գէպքը կըսէ նպարավաճառին . « բարեկամ , խելքովդ զայդ վախցնել կուզես , գորա Այեքսանդրի ուզո կըսէն , որց տկանջները խցուած ու ապառաժի նման պընդացած են այնչափ առեն թմբուկին ձայնը լաւլով , քու ակար աղաղակներդ պիտիլսելի՞ ըլլան դորա :

## Օ ԵՆ ԱՌ ՑՈՒՐ ԵՐ

### ՉՈՐՍ ՕՐԻՈՐԴ

#### ԿԱՄ

ՈՒՍՈՒՄՆԱԾԱԲԵՐՔ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԾԵՍՑՔ

Այս անունով տետրակ մի ի ըստ ընծայուեցաւ աշխատասիրութեամբ Պ. Ներուս Ա. Ազգուրեանի , գեղեցիկ թատրերդութիւն մի է , որց մէջ յայնի կը աեսնուի արգայ հեղինակին ճարապաւթիւնը որով կըցէր է նկարագրել այն դրացմունքը զոր կզայ ուսումնասէր և կամ ընդ հակառակն ուսումնատեաց մի :

Ալ ծախուի ամեն գրալաճառաց քով 10 զուրուշ :

Ալ լսեմք զի մէր արգայ բաժանորդներէն մէկ քանին ժամանակին թերթերնիս ընդունելուն գահգատ կընեն , ուստի կը ինդրուի որ նամակատ մի իմացնեն մեզ ընդունած թիւերնին կամ Տէրուահճի խան թաշնիկին ընթեղցարանին և կամ Յ. Ա. տաղարանին միջնորդութեամբ :

Արդի (նասով) ԴՆ:

Այս դեզս շատ օգտակար է մարդուս կաշուերը կակացնելու :

Նախ տաք ըրով լուալու է ու զրին մէջը աղէկ մը քերելու է կոշտերը , եաքը լաթով մը չորցնելով , գեղք քսած ժամանակդ քիչ

մը վարդի ջուր դնելու է մէջը , ու քիչ մը մատովդ խառնելին եաքը կոշտերուն վրա քը սելու է օրը երկու անգամ այսինքն մէկ մը առատուն , մէկ մը իրիկուան , ու լաթով մը կապելով շարունակէ ասի մինչև կականաց :

Այս գեղերուն ծախուած աեզզը , Պօլիս Բէրատահճի խան սանդուխին գլուխ սենեակը « թողջնիկին » ընթերցարանը , նաև Օրթագիւղ « Ա արդին » գործակալը , որուն շնորդն ալ ինքն է :

Դին 10 զուրուշ :

Յոշիկի Զայլագեան .

ՀԱՅԿԱԶՆ ԵՒ ԱՐՃԱԿՈՒՆԻ

ԿԱՀԱՊԵՏԱՑ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱՑ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ճամանակին ձեռքէն անկորուստ աղատված Հայաստանի 20 ի շափ նախնի իշխանաց պատկերները տասը տարի մը կայ Ուսուսոյէն հու եկած էին և շատ քիչ օրինակ ըլլուրն ամեն հետաքրքիր և հոյրենասէր անձնները չէին կրցեր գոհացընել . ուստի ասկէ վեց տարի առաջ վիմագիր Պարսն մը անհնք շատ ցընելու սկսեց նէ ալ՝ արտաքայ կարդի արդելք մը չըներեց որ լմնցընէ : Այս անգամ Պ. Յարութիւն Հէքիմեան անսնցմէ հինգը , մէկ թուղթի վրայ վայելսապէս յարմարցընելով վիմագրութեամբ տպած է և միւս ներն ալ նցյն ձեռլ հետ զհետէ պիտի տպէ . որով 4 հատ թուղթի վրայ պիտի ըլլան ամենը :

Ըստնց առ աջինը տպված է և կը ծախովի գրավածառ Պ. Արդարեանին և պատկեր ծախողներու խանութը :

ԽՄԲԱԳԻՒՐ - ՏՆՕՐԵՆՔ

ԹՈՎՄԱՍ Պ. ՊԵՌԵԱՑ

ՍԱՐԳԻՍ ԲԱՐՄԵԼԵԱՆ

Ի ԱԱԱԹԱ Կ. ՊՈԼՍՈՅ

Ի ՏՊԱՐԱՆ ՅՈՎԱՆՆՈՒԹ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵԿՑԻՑ ԳՈՐՈՅ ԹԻ 47